community

The New Apostolic Church around the world

02/2026/AM

Ամեն ինչ նոր՝ Քրիստոսով

Խմբագրական
Սիրո և գթասրտության Աստված

Ժամերգություն
Նոր գինի, նոր կյանք

Կրթություն
nac.academy - թվային և միջազգային

New Apostolic Church
International

Խմբագրական

3 Սիրո և գթասրտության Աստված

Ժամերգություն

4 Նոր գինի, նոր կյանք

Մանկական անկյուն

10 Հոգեգալստյան հրաշքը

12 Այցելություն Աբիգալեին Դիամոնդ քաղաքում / Կանադա/

Կրթություն

14 nac.academy – թվային և միջազգային

Ընդհանուր լուրեր

18 Երբ ձևավորվում է վստահությունը

Տիտղոսաթերթի լուսանկարը՝ ՆԱԵ Կանադա
Շապիկի հետևի լուսանկարը՝ ՎԱԻ Ֆրանսիա

Սիրո և գթասրտության Աստված

Սիրելի եղբայրներ և քույրեր,

Հիսուս Քրիստոսի հարությունը քրիստոնեական հավատի, մեր հավատի կենտրոնակետն է, և դրանով Աստված հաստատում է Հիսուս Քրիստոսի ուսմունքն ու անձը:

Հիսուս Քրիստոսը եկել և տեղեկացրել է մարդկանց մի ուսմունք, որը տարբերվում է բոլորից: Այն բացահայտում է Աստծո ճշմարիտ բնույթը, նա նրանց ասում է, որ Աստված ձեր Հայրն է, նա է սիրողը: Նրա համար կարևորը միայն մի քանի պատվիրանների, կանոնների ու օրենքների պահպանումը չէ: Նա ուշադրություն է դարձնում ձեր սրտերի և ձեր սիրո վրա: Նա ձեզ շատ մոտ է, նա հոգում է ձեզ համար: Նա գթասրտության Աստվածն է: Նա մեր Աստվածն է, ոչ թե՝ պատժողը, ոչ թե է նա, ով ուզում է վրեժխնդիր լինել:

Աստված հարությամբ ապացուցում է, որ Հիսուսն իսկապես իր սիրելի Որդին է: Աստված հոգացել է նրա համար նրա ողջ կյանքում: Սակայն, առաջնայնությունը կայանում է նրանում, որ լինի Հիսուս Քրիստոսի կողքին, որպեսզի նա որպես մարդ կարողանա Աստծո արքայություն մուտք գործել և իր հետ հավիտենական միասնություն ունենալ:

Նա Հիսուս Քրիստոսի Հայրն է եղել, և նա մեր Հայրն է: Մենք հավատում ենք, որ Աստված մեզ սիրում է, ոչ թե այն պատճառով, որ նա մեզ շատ փող է տալիս, որ լուծում է մեր ունեցած յուրաքանչյուր խնդիրը: Նրա սերը կայանում է նրանում, որ նա մեզ թույլ

Լուսանկարը՝ ՄՆԱԵ

է տալիս հավատարիմ մնալ մինչև վերջ և մուտք գործել իր արքայություն: Մենք գիտենք, որ նա հոգում է մեզ համար մեր առօրյա կյանքում, բայց դա չէ կարևորը: Կարևորն այն է, որ նա ուզում է օգնել մեզ՝ արժանանալու հավիտենական կյանքին:

Սրտանց ողջույներով

Ձեր՝
Ժան-Լյուք Շնայդեր

Նոր գինի, նոր կյանք

Լուսանկարները՝ ՆԱԵ Կանադա

Ժամերգություն գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերի հետ կիրակի օրը՝ 2025-ի հոկտեմբերի 19-ին, Քիչենների համայնքում / Կանադա/

Մարկոս 2,22

Եվ ոչ ոք հին տիկերի մեջ նոր գինի չի լցնի, ապա թե ոչ նոր գինին կպայթեցնի տիկերը, գինին կթափվի և տիկերը կփչանան: Այլ նոր գինին նոր տիկերի մեջ պետք է լցվի:

Ես գիտեմ, որ Կանադայում անցկացվող այս ժամերգությունն առաձնահատուկ է, քանի որ շրջանային առաքյալն ու շրջանային առաքյալի օգնականը պետք է անցնեն հանգստի, և նոր շրջանային առաքյալ է ձեռնադրվելու: Սա առանձնահատուկ է ողջ մարզի համար: Չնայած դրան՝ մենք, այնուամենայնիվ, առաջին հերթին ժամերգության ենք եկել: Այս ժամերգությունը հանգստի անցնող երկու եղբայրների, կամ նոր շրջանային առաքյալի շուրջը չի ծավալվելու: Այն ծավալվելու է ձեր շուրջը: Խոսքը գնում է ձեր փրկության մասին, Աստծո հետ հարաբերության մասին: Եվ խոսքը գնում է իմ մասին, իմ փրկության, Աստծո հետ իմ հարաբերության մասին: Այսօր ամենակարևորն այն է, որ մենք այնպիսի ժամերգություն ապրենք, որի ժամանակ Աստված կխոսի քեզ և ինձ հետ: Նա մեզ տալու է բարի լուրը,

որի կարիքը մենք ունենք, որպեսզի հավատարիմ մնանք և պատրաստ լինենք նրա գալստյանը:Սա է այս ժամերգության կորիզը: Աստվածաշնչյան այս խոսքը պատմում է փարիսեցիների և օրենսգետների հետ Հիսուսի զրույցի մասին: Նրանք կշտամբում են նրան, որ նա և իր աշակերտները չեն պահպանում կարևոր ավանդույթները: Խոսքը կոնկրետ գնում էր պասի մասին: Հիսուսը բացատրում էր, որ նա եկել է, որպեսզի բոլորովին մի նոր բարի լուր բերի, և որ այս նոր ավետիսը չի համապատասխանում հին ավանդույթներին: Սրանից ելնելով՝ պատկերավոր ձևով բերվում է գինու և տիկերի օրինակը:

Մենք այսօր թերագնահատում ենք, թե ինչպիսի նորարարություն էր այն ժամանակ այս ավետիսը: Այն դժվար հասկանալի էր և ավելի դժվար՝ յուրացնելի: Հիսուսն ասում էր՝ ,, Դուք լսել եք … , բայց ես ասում եմ ձեզ,,: Հնազանդ հրեաների համար, ովքեր հաստատուն էին պահում իրենց ավանդույթները, դա հոգևոր հեղափոխություն էր:

Ի՞նչն էր նոր նրա ավետիսի մեջ: Առաջինը՝ նրա ընկալումը Աստծո էության մասին: Հրեաների համար Աստված իրենց տիրակալն էր, ով իրեն պահում է այն թագավորների նման, որոնց իրենք ճանաչում էին: Նա օրենքներ է գրում, իր կամքն է կատարել տալիս, անհրաժեշտության դեպքում՝ նաև ուժով, և պատժում է անհնազանդներին: Նա պաշտպանում է իր ժողովրդին նրանով, որ ոչնչացնում է նրա թշնամիներին: Սակայն, Հիսուսը բացահայտում է Աստծո ճշմարիտ էությունը՝ նա գթասիրտ և կարեկից Հայր է, սիրո և ողորմածության Աստված: Նա ներում է: Նա սիրում է մեղավորներին: Դա հեղափոխություն էր- և դժվար ըմբռնելի:

Հիսուսն ուսուցանում էր Աստծո հանդեպ մարդու պահվածքի վերաբերյալ բոլորովին նոր հասկացողություն: Ի՞նչ է նշանակում Աստծո հանդեպ ճիշտ պահվածք ունենալ, այսինքն՝ արդար լինել: Որպեսզի արդար համարվեն, հրեան պետք է հետևեր օրենքի կանոններին և ավանդույթներին: Խոսքն այն մասին էր, որ ճիշտ կանոնները ճիշտ ժամանակին և ճիշտ ձևով կիրառվեն: Այդ դեպքում կվաստակեն Աստծո օրհնանքը: Սա էր արդարության մասին ըմբռնումը Հին Ուխտում:

Հիսուսը բացատրում էր, որ կանոնների ու ավանդույթների կատարումը բավարար չէ: Վճռորոշը սրտի վերաբերմունքն է- կարևոր է Աստծուն և մերձավորին սիրելը: Խնդիրն այն է, որ սրտի վերաբերմունքը արտաքինից չի երևում: Յուրաքանչյուրը կարող է տեսնել, որ եթե դու հետևում ես օրենքին, ապա Աստծո և մերձավորի հանդեպ սերը ավելի դժվար ճանաչելի է լինում:

Հիսուսը պահանջում է բոլորովին նոր՝ մտածելակերպ՝ մարդիկ պետք է փոխեն իրենց սրտի վերաբերմունքը- ամեն ինչ պետք է նորանա:

Այստեղ գալիս է բոլորովին նոր հասկացողություն Աստծո օրհնանքի մասին: Այն ժամանակ մարդիկ հստակ պատկերացում ունեին այն մասին, թե ինչ է օրհնությունը: Աստված հնազանդ ժողովրդին վարձատրում էր խաղաղությամբ և բարեկեցությամբ, իսկ արդարներին՝ լավ կյանքով: Եվ ընդհակառակը՝ ու մոտ ամեն ինչ վատ էր, ապա նա դա էր վաստակել, քանի որ նա սխալ էր գործել:

Հիսուսն արմատապես փոխում է այս պատկերացումը: Երանիների քարոզում նա երանի է տալիս աղքատներին, ճնշվածներին և

Երեխաները ժամանման պահին ողջունում են գլխավոր առաքյալին

Հավատարիմ մնանք Քրիստոսին և մերժենք յուրաքանչյուր փոխհամաձայնություն մեղքի հետ:

հալածվածներին: Նրա համար օրհնությունը ոչ մի կապ չունի երկրային բարեկեցության հետ, այլ այն կապված է հավիտենական կյանքի՝ Աստծո հետ լիակատար միասնության հետ: Եվ այդ օրհնանքը չեն կարող իրենք իրենց համար վաստակել, այլ այն կընդունեն միայն ողորմածության շնորհիվ: Անգամ նա, ով Աստծուն և մերձավորին սիրում է, պետք է խոնարհաբար ողորմածություն խնդրի: Շատերի համար դրանով խաթարվում է իրենց հավատքային համակարգը, նրանք այլ բան էին սովորել:

Հիսուսը փոխում է նաև հավատի նպատակի վերաբերյալ հասկացողությունը: Հրեաների համար դա կայանում է նրանում, որ դառնան խոնարհ մարդ, ով իրեն ճիշտ է պահում Աստծո և մերձավորի հանդեպ: Հիսուսի համար դա շատ քիչ էր: Նա պահանջում էր, որ իրենք իրենց ուրանան, դառնան նոր արարած և հետևեն իր օրինակին- ամողջովին մի նոր ուսմունք:

Իսկ հետո նա խոսում էր Աստծո ժողովրդի վերաբերյալ նոր հասկացողության մասին: Այլևս միայն Իսրայելը չէր, այլ բոլոր ազգերից ու ավանդույթներից ձևավորվեց մի ժողովուրդ բաղկացած հասարակության բոլոր խավերի հավատացյալներից, ովքեր չնայած բոլոր տարբերություններին՝ միաբան էին, միավորված՝ Քրիստոսի հանդեպ իրենց հավատով:

Պատկերացրեք, թե ինչ հեղափոխություն էր դա Իսրայելի համար: Հիսուսը հիմք դրեց բոլորովին նոր մտածելակերպի՝ մարդիկ պետք է փոխեն իրենց սրտի վերաբերմունքը-ամեն ինչ պետք է նոր դառնա:

Քրիստոսի ուսմունքը ոչ միայն նոր է, այն տիեզերական է և հավերժ վավերական: Այն կարիք չունի ճշգրտման: Մովսիսական օրենքն ամեն անգամ պետք էր ճշգրտվեր՝ կախված արտաքին իրավիճակներից- և մինչև այսօր էլ այդպես է՝ անապատում խորանը, Երուսաղեմում տաճարը, տարածվածության պարագայում՝ սինագոգները:

Հիսուսը սակայն ասում էր՝ Երկինքն ու երկիրը կանցնեն, բայց իմ խոսքերը չեն անցնի / Մատթ. 24,35/: Նրա Ավետարանը կարևոր է բոլոր մարդկանց համար, յուրաքանչյուր ժամանակում, բոլոր պայմաններում: Ինչ նա ասում է, վավերական է, հավիտենական: Իսկ ավետիսն այսպես է հնչում՝ Որպեսզի հասնեն հավիտենական կյանքի, պետք

է վերստին ծնվեն սուրբ ջրով և Հոգով, Քրիստոսի եկեղեցու մասը դառնան, հետևեն Քրիստոսի առաքյալներին և ընդունեն Սուրբ Հաղորդությունը: Դրանում մենք պետք է հաստատուն մնանք: Այն չպետք է ճշգրտվի կամ փոխվի: Այն Հիսուս Քրիստոսի ճշմարտությունն է:

Սակայն, ես մտահոգված եմ, քանի որ տեսնում եմ, որ ինչպես այն ժամանակ, այնպես էլ այսօր, քրիստոնյաներին վախեցնում է Ավետարանի այս արմատական նորությունը: Նրանց համար դա շատ է, և նրանք ցանկանում են վերադառնալ հին ավանդույթներին: Դեռ Պողոսը ստիպված էր հորդորել գաղատացիներին, որ հավատարիմ մնան Ավետարանին և ոչ թե կրկին տրվեն ստրկության լծին- մեղքի լծին:

Հիշեք Իսրայելի մասին՝ Տերը ժողովրդին փրկեց եգիպտացիների լծից: Նրանք ազատ ու երջանիկ էին: Սակայն, որոշ ժամանակ անց մոռացան ստրկությունը և հիշեցին Եգիպոսում ապրած կյանքի միայն գեղեցիկ կողմերը-մսով լի կաթսաները և հացը:

Այսպես է շատ քրիստոնյաների պարագայում՝ կյանքն ավելի հեշտ կլիներ, եթե մի քիչ փոխհամաձայնության գնային մեղքի հետ: Հիսուսն այս առումով իսկապես մի քիչ պահանջկոտ է: Բայց, ստիպված չենք հարյուր տոկոսով անել այն, ինչ նա ասում է...: Ոչ: Հավատարիմ մնանք Քրիստոսին և մերժենք մեղքի հետ յուրաքանչյուր փոխհամաձայնություն:

Ձախում՝ Շրջանային առաքյալ Մարկ Վոլլը և շրջանային առաքյալի օգնական Ֆրանկ Զուրը անցնում են հանգստի
Աջում՝ Արնաուդ Մարթիգը ստանձնում է շրջանային առաքյալի պաշտոնը

Աստված հաճախ էր կշտամբում իսրայելացիներին՝ միայն կարիքի դեպքում իր մոտ գնալու համար: Երբ գործերը վատանում էին, նրանք զոհաբերություն էին մատուցում, որպեսզի դա օգնի: Երբ խնդիրը լուծվում էր, նորից Աստծո հանդեպ վերաբերմունքը խախտվում էր: Որոշ քրիստոնյաների մոտ ևս առկա է այս պահվածքը: Քրիստոսը հորդորում էր աշակերտներին, որպեսզի այս կյանքում ստանան իր օգնությունը: Նրանք դառնում են դեպի Աստծված այնպես, ինչպես այցելում են ծեր մորաքրոջը, որպեսզի խիղճը հանգստացնեն, օգնություն ստանան կամ ժառանգության հույս ունենան:

Առանց դատապարտելու՝ Շատ խոսքեր, այսպես կոչված քրիստոնեական քարոզներ, ելնում են գրեթե միայն երկրային հանգամանքներից: Եթե դու այս կամ այն բանն անես, հետևես օրենքին, դու կօրհնվես: Տեսնում եք, թե ինչ հարուստ եմ ես: Եթե դուք էլ նույնն անեք, դուք էլ կհարստանաք, քանի որ ես օրհնված եմ: Եթե դուք հարգեք կանոնները, կարող եք բարի մարդիկ դառնալ: Կյանքը կլինի ավելի լավը, եթե բոլոր այս կանոնները պահվեն …

Հավիտենական կյանքի սահմանը կորել է: Խոսքը միայն այս աշխարհի մասին է, երկրային օրհնության- վերադարձ դեպի Հին կտակարան: Փոփոխության ասպեկտը, հավիտենական կյանքի ասպեկտը հազիվ թե դեր ունենա: Ափսոս: Հիսուսը մահացավ, որպեսզի մեզ հավիտենական կյանք նվիրի- ոչ թե մեր երկրային խնդիրները լուծի, ոչ թե երկիրը կառավարի, ոչ թե մեզ հարուստ դարձնի: Եթե խոսքը միայն դրա մասին լիներ, կարիք չէր լինի Նոր կտակարանի, Հին կտակարանը կբավարարեր:

Որոշ քրիստոնյանի դուր է գալիս Հին կտակարանի կանոնները- այն միտքը, որ ճիշտ գործելու շնորհիվ ավտոմատ ձևով օրհնություն կստանան: Ավելի հեշտ է հետևել ցուցակների, քան ապրել Նոր կտակարանի պատվիրաններով: Այնտեղ պատրաստի ցուցակներ չկան, թե ինչը երբ պետք է անեն, որպեսզի օրհնվեն: Հիսուսի պատվիրանը հեշտ է հնչում՝ սիրիր Աստծուն և սիրիր քո մերձավորին: Մենք պետք է միշտ քննենք մեզ, որպեսզի իմանանք, թե տվալ պահին ինչպես ենք պահում մեզ Աստծո ու մերձավորի հանդեպ: Եվ, եթե նկատենք, որ երբեք չենք կարող այնպես սիրել, ինչպես Քրիստոսը, դա տհաճ կլինի: Այդ դեպքում ավելի հարմար կթվա հին կանոններին վերադառնալը- բայց դա Նոր կտակարանը չի լինի:

Հին Ադամը մեր մեջ միշտ ուզում է վերադառնալ: Մենք պետք է նորանանք, բայց հին Ադամը ուզում է մնալ: Նա հավատում է, որ կարող է բարի գործերով փրկություն վաստակել: Աստված պարտավորված է այն տալ: Եվ նա չի ըմբռնում, որ Աստված բոլորին նույն օրհնությունն է նվիրում: Նա անարդար է

Գլխավոր առաքյալի օգնական Հելգե Մուչլեր

Շրջանային առաքյալի օգնական Արնաուդ Մարթիգ

Շրջանային առաքյալ Մարկ Վոլլ

համարում, երբ մյուսները, ովքեր ավելի քիչ են հավատարիմ, նույնն են ստանում, ինչ՝ ինքը: Մեղավորները պետք է պատժվեն:

Բայց Աստված ասում է՝ Դա քո գործը չէ: Ես փրկում եմ, եթե ես ուզում եմ փրկել: Սա է Նոր կտակարանը: Սակայն, հին Ադամն իր ետն է առաջ տանում: Նա մյուսներին պարտադրում է իր կյանքի և մտածողության ձևը ու պահանջում, որ դրանք համապատասխանեն: Նաև եկեղեցու պարագայում՝ եվրոպացիներն ուզում են եվրոպական եկեղեցի, աֆրիկացիները՝ աֆրիկյան, հյուսիսային ամերիկացիները՝ հյուսիս-ամերիկյան, հարավային ամերիկացիները՝ հարավ-ամերիկյան: Դրանց ետևում այս ցանկությունն է՝ ես չեմ ուզում փոխվել: Ես հաստատում եմ, թե ով եմ ես, իսկ մնացած բոլորը պետք է համապատասխանեն ինձ: Իսկ որտե՞ղ է մնում Քրիստոսին հետևելու և նրան նմանվելու միտքը: Այն մոռացության է տրվում: Յուրաքանչյուրն զբաղված է իր ,, Ես այսպիսին եմ,, մտքով, որտեղ կորչում է հիմնական նպատակը: Քրիստոսը հորդորում է մեզ՝ ուրանալ ինքներս մեզ, որպեսզի նմանվենք նրան: Եկեղեցու միաբանությունը հիմնվում է Հիսուս Քրիստոսին հետևելու մեր ընդհանուր որոշման վրա: Սակայն, հին Ադամը դիմադրում է:

Եղբայրներ և քույրեր, սրանք միայն մի քանի մտածելու տեղիք տվող մտքեր են: Քրիստոսը բերեց բոլորովին մի նոր ուսմունք՝ Աստծո նոր պատկեր, նոր հարաբերություն Աստծո հետ, օրինանքի նոր հասկացողություն, նոր արարած և նոր ժողովուրդ դառնալու հորդոր: Մինչ այսօր շատ քրիստոնյաներ վախենում են նրանից, որ դա իրենց համար նոր է, դժվար է, պահանջկոտ է:

Մենք դարձել ենք քրիստոնյաներ, դարձել ենք նորառաքելականներ, քանի որ մենք ուզում ենք հավիտենական կյանք: Դրա համար մենք գիտենք, որ պետք է դառնանք նոր արարած: Այն սկսվում է սուրբ ջրով ու Հոգով մեր վերածնունդով: Այս պրոցեսը շարունակվում է: Դրա համար մենք կարիք ունենք Աստծո խոսքի, Սուրբ Հաղորդության և քույր-եղբայրների հետ միասնության: Եվ մենք աշխատում ենք, որ նմանվենք Քրիստոսին: Ինչքան ավելի շատ նմանվենք Քրիստոսին, այնքան ավելի հեշտ կլինի Քրիստոսով միաբանությունը՝ չնայած բոլոր տարբերություններին:

Հիմնական մտքեր

Հիսուս Քրիստոսը մեզ բացահայտում է Աստծո էությունն ու կամքը: Նրա ուսմունքը հավերժ վավերական է: Այն նպատակ ունի մեզ հավիտենական կյանք նվիրել: Մենք սիրում ենք Աստծուն և մեր մերձավորին: Մեր միաբանությունը հիմնվում է Քրիստոսին նմանվելու մեր միասնական ցանկության վրա:

ՀՈԳԵԳԱԼՍՏՅԱՆ ՀՐԱՇՔԸ՝

ԸՍՏ ԳՈՐԾ ԱՌԱՔԵԼՈՅԻ 2, 1-47-Ի

Զատիկից հիսուն օր անց՝ Հոգեգալստյանը, առաքյալները Հիսուսին հետևող տղամարդկանց և կանանց հետ միասին հավաքվեցին մի տան մեջ: Նրանք սպասում էին, որ Սուրբ Հոգու ուժը կպարուրի իրենց, ինչպես Հիսուսն էր նրանց ասել:

Հանկարծ երկնքից հնչեց մի ձայն, սաստիկ հողմից եկած ձայնի նման և լցրեց ամբողջ այն տունը, ուր նստած էին: Եվ նրանց երևացին բաժանված լեզուներ, նման բոցեղեն լեզուների, որոնք և նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա: Եվ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով ու սկսեցին տարբեր լեզուներով պատմել Աստծո մեծ գործերի մասին:
Այդ նույն ժամանակ քաղաք էին այցելել ուխտավորներ Միջագետքից, Ասիայից, Եգիպտոսից, Լիբիայից և Հռոմից: Նրանք ճանապարհ էին կտրել, որպեսզի Երուսաղեմի տաճարին զոհաբերություն մատուցեն:

Շատ ուխտավորներ եկան այն տունը, որտեղ Սուրբ Հոգով լցված աշակերտները նրանց հետ սկսեցին խոսել: Այդ ժամանակ նրանք մի ակնառու բան ամրագրեցին, որ յուրաքանչյուրը բարի լուրը լսում էր իր երկրի լեզվով:
Ունկնդիրները հարցնում էին իրար. ,, Ինչպե՞ս է նման բան հնարավոր: Այս մարդիկ գալիլիացիներ են, ինչպե՞ս կարող են խոսել այլ լեզուներով,,: Մի քանիսը կարծում էին, թե

աշակերտները հավանաբար հարբած են։
Հետո Պետրոսը խոսեց և ասաց .
,, Այստեղ ոչ ոք հարբած չէ։ Այսօր տեղի է ունենում մի մեծ հրաշք։ Աստված իր Սուրբ Հոգով է լցրել, ինչպես նա մարգարեների միջոցով էր խոստացել,,։
Հետո Պետրոսը պատմում է Հիսուսի մասին, թե ինչպես է նա խաչվել և մահից հարություն առել։ Պետրոսի քարոզն ազդում է մարդկանց սրտերի վրա։ Նրանք հարցնում էին առաքյալներին. ,, Ի՞նչ պետք է մենք անենք,,։

Պետրոսն ասում է նրանց. ,,Մկրտվեցեք, որպեսզի ձեր մեղքերը ներվեն և դուք ընդունեք Սուրբ Հոգին,,։
Շատերը հավատում են Պետրոսին և մկրտվում են։ Այսպե, քրիստոնյաների համայնք է գալիս 3 000 մարդ։ Նրանք միասնություն են կազմում, լսում են առաքյալների խոսքերը, աղոթում են և հացն են կսում իրար հետ։ Այն, ինչ իրենք ունեին, բաժանում են։

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱԲԻԳԱԼԵԻՆ՝ ԴԻԱՄՈՆԴ ՔԱՂԱՔՈՒՄ / ԿԱՆԱԴԱ/

Այս տարվա համար մեր գլխավոր առաքյալը ընտրել է հետևյալ կարգախոսը՝ ,, Ժամանակն է բարին անելու,,: Դա ես վաղուց եմ անում: Օրինակ, ես հաճույքով օգնում եմ փոքր երեխաներին և մեր համայնքի մեծահասակներին: Իսկ կիրակնօրյա դպրոցի այլ աշակերտների և մեր համայնքի երիտասարդների հետ անցած տարի մասնակցեցի ,,Տարվա ամենացուրտ գիշերը,, ակցիային, որի ժամանակ մենք փող հավաքեցինք Լեթբրիջի անտուն մարդկանց համար:

Իմ անունը Աբիգալե է, ես 13 տարեկան եմ և ապրում եմ Կանադայի Դիամոնդ քաղաքում: Երբ ես մեծանամ, ուզում եմ դառնալ ուսուցչուհի և դասավանդել մաթեմատիկա:

Ես արդեն ուրախանում եմ այն բանի համար, որ դառնալու եմ կիրակնօրյա դպրոցի ուսուցչուհի: Այստեղ դուք տեսնում եք ինձ Լեթբրիջի կիրակնօրյա դպրոցի մի քանի այլ երեխաների հետ, սա այն համանքն է, որը ես հաճախում եմ:

Արդեն չորս տարի է, որ ես նվագում եմ ջութակ: Ես արդեն ելույթներ եմ ունեցել համայնքում: Լուսանկարում դուք տեսնում եք ինձ Սուրբ Ծննդյան տոնին, որի ժամանակ ես կատարեցի ,, Սուրբ Ծննդյան անգլիական առաջին երգը ,,: Համայնքի տոնակատարությունների ժամանակ ես դերասանական փորձ եմ ձեռք բերել, բայց իմ առաջին հրապարակային ելույթը ունեցել եմ դպրոցում, թատերական մի ներկայացման մեջ՝ բարկացած արջի դերով: Դրանից բացի, ես հաճույքով վոլեյբոլ ու բասկետբոլ եմ խաղում, դահուկ եմ քշում և սահնակով սահում, կարդում եմ և քարտեր եմ պատրաստում:

Այստեղ դուք ինձ տեսնում եք իմ ընտանիքի հետ միասին՝ իմ հայր Ջոշն է, մայրս՝ Միշելեն, կրտսեր քույրս՝ Քեյթլինը և ավագ քույրս՝ Օլիվիան: Արդեն հինգ սերունդ մենք նորառաելական ենք: Իմ հայրիկի նախապապը ժամերգությունների է հաճախել Շվեյցարիայում՝ մինչ մեր Կանադա տեղափոխվելը, հետո այստեղ կազմել է իր ընտանիքը:

Սա Լեթբրիջի եկեղեցու շենքն է: Նորառաքելական հավատամքը Կանադա է եկել մի երիտասարդ քրոջ միջոցով, ով Գերմանիայից գնացել է Կաթերլոյի մոտակայք: Նրա տանն են տեղի ունեցել առաջին ժամերգությունները, և, քանի որ նա միշտ նոր հարևանների էր հրավիրել, ձևավորվել է մի փոքր համայնք:

Թիկու տերևը իր բոլոր տարբերակներով Կանադայի տիպիկ հուշանվերն է: Այս մեկը թիկու օշարակից է: Կանադայում մենք նախաճաշին սիրում ենք թիկու օշարակը թխվածքաբլիթով կամ քունջութով ու կակաչի սերմերով:

Անգլերեն թիկու տերևը կոչվում է մեյփըլ լիֆ: Մեր ընտանեկան շնիկի անունը Մեյփըլ է, քանի որ նա, երբ յոթ տարի առաջ մեզ մոտ եկավ, իր զույներով համապատասխանում էր տերևներին, որոնք հենց նոր էին ընկել ծառերից: Գիտե՞ք, որ թիկու տերևը պատկերված է Կանադայի դրոշի վրա:

Աղբյուրը՝ Ամագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 06/2025, լուսանկարները՝ մասնավոր՝ stock.adobe:Paolo, MaskaRad, annapustynnikova, Margrit Hirsch

nac.academy – թվային և միջազգային

Շարունակական կրթություն ամենուրեք՝ Սա միջազգային Նորառաքելական եկեղեցու նոր առաջարկի կարգախոսն է, որը հիմնականում ուղղված է հոգևոր պաշտոնը կամավոր ստանձնողներին:

nak.org, nac.today և und nac.photos կայքերը աճ են գրանցել, nac.academy -ին կոչվում է կրթության պորտալ: Ինչպես մյուս երկու վեբ-կայքերի դեպքում, անունը նաև ինտերնետային հասցեն է: Ով մուտք է գործում վեբ զննարկիչ, կարող է անմիջապես գրանցվել կամ մուտք գործել առկա եկեղեցական հաշվով (Single Sign-On, SSO):

Տեսության մեջ և տրակտիկայում

Հոգու խնամք, քարոզ, աղոթք ժամերգության ժամանակ, ննջեցյալներին մատուցվող ծառայություն և պաշտոն հասկացողություն: Սրանք այն դասընթացներն են, որոնք ընտրվել են: Հետագա թեմաները վերաբերում են եկեղեցական խորհուրդների հասկացողությանը, հակամարտության լուծմանը և օրհնանքի արարողություններին: Կան ուղիղ հղումներ դավանաբանությանը / ՆԱԵ/, դավանաբանությանը հարցերով ու պատասխաններով / ՆԱԵԴ ՀՊ/, ծիսական գրքույկին և հոգևորականների ուղեցույցներին: Դասընթացներն այս պահին հասանելի են անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն, ինդոնեզական, տագալոգ, սուալի, ալբաներեն և ռումիներեն լեզուներով:



Լուսանկարը՝ ՄՆԱԵ

Լիտվերեն, լատիշերեն, ինչպես նաև պորտուգալերեն լեզուներով թարգմանությունները ընթացքի մեջ են:

Սովորել սեփական տեմպով

Դասերը հագեցած են մուլտի- մեդիա նյութերով՝ լսելու և կարդալու համար տեքստեր, ցանկեր և գրաֆիկներ, տեսանյութեր և բազմաթիվ ընտրողական թեսթեր սովորածն ամրապնդելու համար: Յուրաքանչյուրը կարող է դասընթացներն անցնել ցանկացած ժամանակ և ամենուր՝ էկրանին, պլանշետին կամ սմարթֆոնին, իր սեփական տեմպով: Տեխնիկական հիմքը „ Իլիասն է„ ՝, բաց կոդով հարթակ, որն օգտագործվում է միջազգային համալսարանների, գերատեսչությունների և ձեռնարկությունների կողմից:

Իսկ ինչպե՞ս nac.academy-ն կարողացավ այդքան արագ և մատչելի կերպով ստեղծել այդքան բազմազան բովանդակություն: Բնականաբար, արհեստական բանականության օգնությամբ: Սակայն միայն աուդիո և վիդեո տարբերակներն են դառնում արհեստական բանականությանը: Բովանդակությունը հիմնված է Նորառաքելական եկեղեցու պաշտոնական, արդիական ուսմունքների և բացատրությունների վրա, և վերանայվել ու հաստատվել է գլխավոր առաքյալի և համակարգող խմբի կողմից:

Հնարավորությունների ստեղծում բոլորի համար

Նորառաքելական եկեղեցում հոգևորականների վերապատրաստումն ու շարունակական կրթությունը նորություն չէ: Սակայն դրա հնարավորությունները մեծապես տարբերվում են ամբողջ աշխարհում: Ծրագրի ղեկավարը սա բացատրում է nac.academy կայքում տեղադրված ողջույնի տեսանյութում:

Շրջանային առաքյալների ժողովը նույնպես անդրադարձել է այս հարցին 2023 թվականին՝ համապատասխան հարցման միջոցով: «Որոշ ոլորտներում կան լավ ռեսուրսներ, մյուսներում՝ ավելի քիչ կարողություններ և հնարավորություններ»:

Հետևաբար, գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը հավանություն է տվել nac.academy-ին: Սկզբնական մշակման փուլում գրանցվել է մոտ 400 օգտատեր Աֆրիկայից, Եվրոպայից, Ամերիկայից և Ասիայից: 96 տոկոսը համոզված էր, իսկ 97 տոկոսը ցանկանում էր, որ ծրագիրն ավելի շատ լինի: Հետաքրքրված յուրաքանչյուր ոք այժմ կարող է կազմել իր սեփական կարծիքը:



Օրինակ՝ Մահացածի խնամքի մոդուլ

„ Իսկ Աստված մեռելների թագավորը չէ, այլ՝ ողջերի, որովհետև բոլորը նրա համար կենդանի են“ (Ղուկաս 20,38):

Բարի գալուստ ,, Նորառաքելական եկեղեցու Ընջեցյալների համար ծառայություն,, թեմայով էլեկտրոնային ուսուցման դասընթացին: Այս դասընթացը տրամադրում է հիմնարար գիտելիքներ ընջեցյալների համար ծառայության ըմբռնման և կիրառման վերաբերյալ: Ինչո՞ւ ենք մենք հավատում, որ կյանքը շարունակվում է մահից հետո: Եվ ի՞նչ է սա նշանակում հոգու և Աստծո հետ նոր կյանքի մասին մեր ըմբռնման համար: Ինչպե՞ս է Աստծո ողորմածությունն ու փրկությունը գործում հանդերձյալ կյանքում, և ի՞նչ նշանակություն ունեն խորհուրդները ընջեցյալների համար: Արդյո՞ք արդարացված է մեր սիրելիների հետ վերամիավորման հույսը, և ինչո՞վ է Նորառաքելական ըմբռնումը տարբերվում ոգեհարցությունից:

Հավատքը հանդերձյալ կյանքի նկատմամբ

,,Որովհետև տեսանելիները ժամանակավոր են, իսկ անտեսանելիները՝ հավիտենական,, / Կորնթացիներին Բ 4,18/:

Ինչո՞ւ ենք մենք հավատում մահից հետո կյանքին:

- Մարդը կազմված է մարմնից, հոգուց և ոգուց (հմտ. ՆԱԵԴ 3.3.4):
- Հոգին մարդու անձնական միջուկն է: Այն շարունակում է գոյություն ունենալ նույնիսկ ֆիզիկական մահից հետո:
- Հոգու անմահությունն ամրագրված է եկեղեցու հավատքում: Սա նշանակում է, որ մարդու գոյությունը մնայուն է Աստծո առաջ և Աստծո միջոցով (հմտ. ՆԱԵԴ 3.3.2):
- Սուրբ Գիրքը վկայում է մահից հետո կյանքի մասին, օրինակ, Իմաստության գրքում / Իմաստություն Սողոմոնի 3;1,4/ և հարուստ մարդու ու աղքատ Ղազարոսի մասին առակում / Ղուկաս 16;19-31/:

Մահից հետո հոգու վիճակը ցույց է տալիս, թե որքան մոտ կամ հեռու է այն Աստծուց: Մահը չի փոխում հոգին - այն մնում է նույնը, ինչպիսին եղել է կյանքում: Հավատքը կամ անհավատությունը, հաշտեցումը կամ անհաշտությունը, սերը կամ ատելությունը ձևավորում են մարդուն ոչ միայն այս աշխարհում, այլև հանդերձյալ կյանքում: Այս վիճակին անդրադառնում է նաև Հիսուսի հարուստի և Ղազարոսի մասին առակը (հմտ. Ղուկաս 16:19-31), որտեղ խոսվում է ապաստանի և տանջանքի վայրի մասին: Մահացածները կարող են գիտակցել իրենց վիճակը: Տանջանքներ կրողները հույս ունեն օգնության:

Ի՞նչ է հոգին:
«Աստված իր ամենաթանկագին արարածին տալիս է կենսական ուժ և նաև շնորհում է նրան աստվածային հատկանիշների բաժին, ինչպիսիք են սերը, անհատականությունը, ազատությունը, բանականությունը և անմահությունը» (ՆԱԵԴ 3.3.2):

- Հոգին հասկացվում է որպես մարդու անձնական միջուկը: Մարդիկ ստեղծված են Աստծո պատկերով: Հետևաբար, նրանց անհատականությունը պահպանվում է նույնիսկ մահից հետո - Աստված նրանց տալիս է հավիտենական կյանք:
- Անմահություն նշանակում է՝ մարդիկ մնում են՝ Աստծո առաջ և Աստծո միջոցով՝ հավիտյան:.

Ի՞նչ է հարության մարմինը:

- Հարության ժամանակ մարդը օժտվում է նոր,

nac.academy կայքով դասընթացները հասանելի են տարբեր լեզուներով

հոգևոր մարմնով (հմտ. ՆԱԵԴ 3.3.4):

- Այս մարմինը այլևս երկրային ֆիզիկական մարմին չէ, այլ «հոգևոր մարմին» (Ա Կորնթացիներին 15:44), մարմնավորման նոր ձև, որում պահպանվում է անցյալի ֆիզիկական գոյությունը:
- Միայն հոգու և հարության մարմնի միության միջոցով է հնարավոր դառնում Աստծո հետ լիարժեք միասնությունը, որի միջոցով լիակատար ավարտվում է մարդկության փրկությունը:

Մահից հետո կյանքի մեր հույսը հիմնված է այն համոզմունքի վրա, որ Աստված հոգուն անմահություն է տալիս և թույլ է տալիս կրկին հարություն առնելու: Հավատի նորառաքելական ըմբռնման համաձայն՝ Աստծո փրկության կամքը վերաբերում է բոլոր մարդկանց՝ ողջերին և մահացածներին: Մեռյալների մասին ուսմունքը հիմնված է այս հիմնավորման վրա, այն ուսմունքի, ըստ որի՝ նույնիսկ մահացածները կարող են Քրիստոսով փրկություն ստանալ:

Խորհուրդներ մահացածների համար

Արարողություն այս կյանքում, ազդեցություն հանդերձյալ կյանքու՞մ:
Մահացածների հոգիները դեռ կարող են ընտրել փրկությունը, դրա համար նրանք Աստծո ողորմածության կարիքն ունեն: Բայց ինչպե՞ս է սա արդարացնում խորհուրդները այս կյանքում մատուցելու Նորառաքելական պրակտիկան:

Այս կյանքում կատարվող խորհուրդները հանդերձյալ կյանքի համար
Հիսուս Քրիստոսի մեջ Աստված ինքը մարդացավ և երկրային մահ ապրեց՝ տառապանքի ու ցավի հետ միասին: Քրիստոսի զոհաբերության միջոցով հաստատվեց այն ամենը, ինչ մարդկությանը անհրաժեշտ է փրկություն գտնելու համար: Այսպիսով, մարդիկ պետք է մկրտվեն ջրով, կենդանի առաքյալի կողմից ձեռնադրմամբ ստանան Սուրբ Հոգու շնորհը և ապրեն Աստծո ներկայությունն ու նրա սերը Սուրբ Հաղորդությամբ:

Խորհուրդները միշտ ունեն նյութական, տեսանելի կողմ և անտեսանելի կողմ՝ Աստծո տեսանելի նշանը և անտեսանելի գործողությունը: Սա վերաբերում է նաև մահացածներին: Երբ խորհուրդները մատուցվում են երկրի վրա ներկայացուցիչների միջոցով, դրանք ազդեցություն են ունենում հանդերձյալ կյանքի այն հոգիների վրա, ովքեր տենչում են դրանք: Նրանք հասանելիություն են ստանում ողորմածությանը և կարող են ստանալ փրկություն:

Մնում է Աստծո անկախ գործունեությունը, թե ով կստանա փրկությունը: Ոչ ոք չգիտի, թե հանդերձյալ կյանքում որ հոգիները կընդունեն խորհուրդները:

Առաքյալների դերը
Առաքյալները գործում են Քրիստոսի փոխարեն և նրա անունով ՆԱԵԴ 7.6 և 9.6.3): Նրանք շարունակում են Հիսուսի գործը, ինչպես նկարագրված է Ա Պետրոս 3:19-20-ում՝ Քրիստոսն ինքը քարոզեց Ավետարանը մեռյալներին. Առաքյալներն այսօր գործում են նույն առաքելությամբ:

Տարին երեք անգամ գլխավոր առաքյալը և շրջանային առաքյալները (կամ նրանց կողմից նշանակված առաքյալները) անց են կացնում ժամերգություններ ննջեցյալների համար: Այս ժամերգությունների ժամանակ խորհուրդները մատուցվում են սովորականի պես:

Ննջեցյալների համար նախատեսված ժամերգություններում, որոնցում խորհուրդներ չեն մատուցվում, մատուցվում է բարեխոսության աղոթք: Այս աղոթքը երախտագիտություն է հայտնում, որ Հիսուս Քրիստոսի զոհաբերության միջոցով նույնիսկ նրանք, ովքեր մահացել են չփրկված, կարող են փրկություն ստանալ: Խորհուրդները ստանալով՝ ստեղծվում է նախադրյալ, որ հոգիները միասնություն ունենան Հիսուս Քրիստոսի հետ և հասնեն առաջնեկությանը, որպեսզի ի վերջո ստանան հավիտենական կյանք, այսինքն՝ կատարյալ միասնություն Երրորդության Աստծո հետ:

Միջնորդական աղոթքով մենք աղոթում ենք չփրկված հոգիների համար, որպեսզի նրանք հավատք և ուժ ստանան վստահությամբ և խոնարհությամբ Քրիստոսին դիմելու համար: Թող

նրանք կարոտ զգան Աստծո ողորմածության և խորհուրդների հանդեպ, և այդպիսով փրկություն ապրեն:

Մեռյալների հարություն

Իրականացման հույս
Ննջեցյալներին խորհուրդների մատուցումը սերտորեն կապված է հարության հավատքի հետ:

Ի՞նչ է նշանակում հարությունը:
Մեռյալների հարությունը Նորառաքելական եկեղեցու կենտրոնական սկզբունքներից մեկն է: Այն Աստծո հետ միասնության մեջ հավիտենական կյանքի հույսի արտահայտություն է:

Քրիստոսի Երկրորդ Գալստյան ժամանակ մեռյալները կրկին հարություն կառնեն (ՆԱԵԴ 10.1.2): Մեռյալների հոգիները կստանան հարության մարմին՝ հոգևոր մարմին, որը այլևս չի ենթարկվում երկրային քայքայման: Հարության միջոցով մարդը վերականգնում է իր սկզբնական ամբողջականությունը՝ մարմինն ու հոգին վերամիավորվում են:

Միայն այն ժամանակ, երբ մեռյալների հոգին օժտված կլինի հարության մարմնով, հնարավոր կլինի լիակատար փրկությունը, քանի որ այդ դեպքում նրանք նմանվում են Հիսուս Քրիստոսին՝ ննջեցյալների առաջնեկին (Ա Կորնթացիներ 15:20):

Հարության հետ կապված է նաև ննջեցյալների հետ վերամիավորման հույսը: Եկեղեցին ներառում է և՛ ողջերին, և՛ մեռյալներին: Բոլորն Աստծո հետ հավիտենական կյանքի հույսն ունեն: Հարությամբ և Քրիստոսի հետ վերջնական միասնությամբ հնարավոր կլինի նոր ձևով կապվածությունը Աստծո և միմյանց հետ: Ուշադրության կենտրոնում ոչ թե մարդկային ընկալումն է, այլ բոլոր փրկվածների կատարյալ միասնությունը Աստծո արքայությունում:

Ինչը ննջեցյալների համար ծառայություն չէ

Ոգեհարցության ոչ մի գործելակերպ
Նորառաքելական եկեղեցու ննջեցյալների համար ծառայությունը չպետք է շփոթել ոգեհարցության հետ:

Ոգեհարցությունը փորձում է կապ հաստատել մահացածների հետ՝ հանդերձյալ կյանքի մասին տեղեկատվություն կամ պատկերացումներ ստանալու համար: Մահացածները դառնում են մարդկային հետաքրքրասիրության առարկա, և հանդերձյալ կյանքը դիտվում է որպես այս կյանքի ուսումնասիրելի չափում: Աստվածաշնչյան մի քանի հատվածներ հստակորեն զգուշացնում են նման գործելակերպերի դեմ (հմտ՝Մովսես 5 18:9-12 և Ա Թագավորաց 28:7-20):

Դրանց հակառակ, ննջեցյալների համար ծառայության միակ նպատակը հոգիների համար փրկությունը հասանելի դարձնելն է:

Ոչ մի շարունակություն նախնիների պաշտամունքի
Ննջեցյալների համար ծառայության սովորույթը չպետք է շփոթել նախնիների ավանդական պաշտամունքի հետ:

Նախնիների պաշտամունքում մահացածներին հաճախ վերագրվում է Աստծո և մարդկության միջև միջնորդի դեր: Մահացածներին մեծարում են, և զոհաբերություններն ու ծեսերը օգտագործվում են նրանց բարեհաճությունը ստանալու համար: Կա համոզմունք, որ նախնիները ազդում են իրենց սերունդների կյանքի վրա՝ լավ կամ վատ՝ կախված նրանից, թե արդյոք նրանց բավարար պատիվ է ցուցաբերվում:

Նորառաքելական հավատքի համաձայն՝ միայն Հիսուս Քրիստոսն է միջնորդը Աստծո և մարդկության միջև: Ոչ թե մենք կարիքն ունենք ննջեցյալների, այլ նրանք կարիք ունեն Աստծո փրկությանը՝ Հիսուս Քրիստոսի միջոցով:

Ննջեցյալների համար ծառայության սովորույթը մահացածների մեծարանք չէ, այլ Աստծո սիրո արտահայտություն բոլոր մարդկանց՝ ողջերի և մահացածների նկատմամբ:

Հոգևորականները և հետաքրքրված անձինք կարող են գրանցվել www.nac.academy հղումով:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդսշթրասսե 243, 8051 Ցյուրիխ/Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ ՍՊԸ հրատարակչություն, Ֆրանկֆուրտյան փողոց 233 63263 Նոյ Իզենբուրգ / Գերմանիա
Խմբագիր՝ Սիմոն Հայնիգեր

Երբ վստահությունը ձևավորվում է

Ալիքները սպառնում են, ձեռքերը բռնում և օգնում. սրանք 2026 թվականի կարգախոսի լոգոների ամենատարածված մոտիվներն են -ահա շրջանային առաքյալների աշխատանքային տարածքների պաշտոնական դիզայնները:

Ալիքը բարձրանում է մարդկանց խմբի վրա: Բայց մարդկանց տանում է մի մեծ ձեռք: Ահա թե ինչպես է Հարավային Աֆրիկայի Նորառաքելական եկեղեցին պատկերացրել տարվա կարգախոսը՝ «Մի՛ վախեցիր, միայն հավատա»:

Ալիքի գաղափարը ոգեշնչված է «Հիսուսը հանդարտեցնում է փոթորիկը» պատմությունից: Ալիքները խորհրդանշում են հոգևոր և բնական մարտահրավերները, որոնք կարող են առաջացնել վախ և անհանգստություն: Ձեռքը ներկայացնում է Աստծո մշտական ներկայությունը, որը զորացնում և պաշտպանում է մարդկանց, նույնիսկ երբ ալիքները բախվում են:

Վերելքների և վայրէջքների միջով անցնող

Շատ նմանատիպ գաղափար է ծագում աշխարհի բոլորովին այլ անկյունից: Կանադայի լոգոն պատկերում է փոթորկալից ջրերում նավարկող առագաստանավ: Բացատրությունն այսպիսին է՝ «Կյանքը բերում է իրական փոթորիկներ, իրական վախեր և իրական մարտահրավերներ, որոնք կարող են մեզ խոցելի և անապահով դարձնել»:

Նավակը փոքր է, իսկ ծովը՝ անծայրածիր, բայց Հիսուս Քրիստոսն իր հետևորդների հետ է: «Նա լուսավորում է մեր ճանապարհը՝ մեզ առաջնորդելով փոթորկի միջով և պատրաստելով կատարյալ ապագայի»:

Ալիքներ, ընտանիք, նրանց վերևում՝ խաչ և գմբեթ: Ահա թե ինչպես է Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության հարավ-արևելյան տարածաշրջանը մեկնաբանել թեման: Հուզական և նյութական խառնաշփոթից հավատացյալները վեր են կենում և դիմում են Քրիստոսին: Այս կերպ նրանք գիտակցում են, որ անվտանգ են աստվածային հոգացության ներքո:

Նրա ձեռքի պաշտպանության տակ

«Հանգիստ եղիր»,-ասում է Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության արևմտյան մասի լոգոյի կենտրոնում գտնվող ձեռքը: Հրամանը, սակայն, ուղղված չէ մարդկանց, այլ՝ նրանց վախերին: Մարդկային դեմքի պրոֆիլը խորհրդանշում է մարդկությանը՝ մարտահրավերների, անհանգստությունների և անորոշությունների առջև: Շրջապատող կապույտ շրջանակը ներկայացնում է Աստծո հոգատար և պաշտպանիչ ներկայությունը, սերը և հավատարմությունը:

Զամբիա/Մալավի/Զիմբաբվե տարածաշրջանի դիզայնի շրջանակը պետք է հասկանալ նույն կերպ: Այն պատկերում է մի աղջկա, որը ձեռքը վեր է մեկնում, և ուժեղ ձեռքը վերևից իջնում է: Սա հղում է տարբեր աստվածաշնչյան պատմությունների, որոնցում Հիսուսը վերջապես ասել է. «Քո հավատքը բուժեց քեզ»:

Հարավային Ամերիկայից արված դիզայնը զուսպ է: Բացատրության մեջ նշվում է, որ «Մի՛ վախեցիր, միայն հավատա» ուղերձն այնքան հզոր է, որ տեսողական տարրերը նախատեսված են պարզապես խոսքն ուղեկցելու համար: Միակ գրաֆիկական տարրը բաց ձեռքն է: Այն «ոչ ինչ-որ բան է պարտադրում, ոչ էլ ինչ-որ բան հետ պահում, այն սպասում է, առաջարկում, աջակցում և վստահություն է ներշնչում: Այն ներկայացնում է մեր Հոր պաշտպանությունը, աջակցությունը և մշտական ներկայությունը»:

Վահանի և թիթեռի միջև

Կապույտ և նարնջագույն վահանը՝ խաչի խորհրդանիշով, Հարավարևելյան Ասիայի հայեցակարգի պատկերային բաղադրիչն է: Սա վերաբերում է Եփեսացիներին 6:16-ի հավատքի վահանին: Կապույտ գույնը խորհրդանշում է խաղաղություն և վստահություն, մինչդեռ նարնջագույնը՝ քաջություն և հույս:

Արևմտյան Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի դիզայնը պատկերում է թիթեռներ ծաղիկների մեջ: «Աստծո ամենանուրբ և փխրուն արարածները հաճախ ամենախոցելիներն են», - ասվում է բացատրության մեջ: «Սակայն այն միջավայրում, որը նա ստեղծել է նրանց համար, նրանք ապրում, ծաղկում են և լուռ, բայց կարևոր ներդրում են ունենում կյանքի ներդաշնակության մեջ»: Որովհետև՝ Աստծո «զորությունը կատարյալ է դառնում թուլության մեջ» (Բ Կորնթացիներին 12:9):

Երեխա, որը սովորում է քայլել և քաջալերվել հոր կողմից: Արևելյան Աֆրիկան այս պատկերը որպես իր կարգախոս է ընդունել: Վախի կաթվածահարությունը հաղթահարելու համար երկնային Հայրը նաև քաջալերում է իր երեխաներին անելու իրենց առաջին քայլերը՝ վստահելով իրեն:

«Մի՛ վախեցիր, միայն հավատա»՝ բազմաթիվ լեզուներով՝ Բառերի ամպի տեսքով ներկայացված այս տարվա կարգախոսը ներկայացված է շրջանային առաքյալների ևս եվրոպական չորս տարածաշրջաններում:

Տեղեկատու

05.04.2026	Մեց(Ֆրանսիա)
12.04.2026	Վինիպեգ (Կանադա)
01.05.2026	Մակատի (Ֆիլիպիններ)
03.05.2026	Թագիհոն (Ֆիլիպիններ)
10.05.2026	Համմ (Գերմանիա)
14.05.2026	Լանգենթալ(Շվեյցարիա)
17.05.2026	Ստրասբուրգ (Ֆրանսիա)
24.05.2026	Կապշտադ(Հարավային Աֆրիկա)
07.06.2026	Ռուանդա (Անգոլա)
14.06.2026	Ստեֆա (Շվեյցարիա)
21.06.2026	Կարլսռուհե (Գերմանիա)
28.06.2026	Քինշասա (Կոնգոյի ԴՀ)

New Apostolic Church
International